## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

## ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾՁԲ-7/9-1

ք. Երևան 19.07.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «Պոժմաստեր» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում 2 264 120 (երկու միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան  պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների

նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Պոժմաստեր» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Մանթաշյան 12շ., 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 16045049610600 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02265669 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | ՄԱՐԳՅԱՆ |

*Հավելված N 1*

*N ՔՄԾՁԲ-7/9 պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ |
|---|---|---|
| 1 | Վերալիցքավորում և նորոգում<br><br>ԿՓ-2 տեսակի կրակմարիչների | Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի (փական. փողակ. մանոմետր և այլն) նորոգում, որից հետո լիցքավորում: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 2±0.1կգ. լիցքավորված կրակմարիչի կշիռը՝ 3±0.4 կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակավորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն ու տարեթիվը, այնուհետև կապարակնքվում: |
| 2 | Վերալիցքավորում և նորոգում<br><br>ԿՓ-5 տեսակի կրակմարիչների | Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը, անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի (փական, փողակ, մանոմետր և այլն) նորոգում, որից հետո լիցքավորում: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 5±0.25կգ. աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակովորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն ու տարեթիվը, , այնուհետև կապարակնքվում: |
| 3 | Վերալիցքավորում և նորոգում<br><br>ԿՓ-8 տեսակի կրակմարիչների | Դատարկվում է կրակմարիչի միջի փոշին: 2,4 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելիությունը. անհրաժեշտության դեպքում կատարվում է հատուկ մասերի (փական, փողակ, մանոմետր և այլն) նորոգում, որից հետո լիցքավորում: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 8±0.25կգ,աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 1.2-1.6 ՄՊա: Պիտակովորվում է, լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն ու տարեթիվը, այնուհետև կապարակնքվում: |
| 4 | Վերալիցքավորում և նորոգում<br><br>ԱԿ-2 տեսակի կրակմարիչների | Դատարկվում է կրակմարիչի միջի պարունակությունը: 22,5 ՄՊա ճնշմամբ սահմանված կարգով ստուգվում է կրակմարիչի իրանի պիտանելությունը, ըստ անհրաժեշտության թարմացվում է կրակմարիչի իրանի ներկը, կատարվում է կրակմարիչների հատուկ մասերի (փական, փողակ, մեմբրան և այլն) նորոգում, որից հետո լիցքավորում ածխաթթվային գազով: Վերալիցքավորված կրակմարիչի տեխնիկական պայմանները պետք է համապատասխանեն գործարանային թողարկման պայմաններին՝ լիցքի քաշը՝ 2-0,1կգ, աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ՝ 58,8 ՄՊա : Պիտակավորվում է՝ լրացվում և կրակմարիչին ամրացվում է լիցքավորման ամիսն ու տարեթիվը, այնուհետև կապարակնքվում: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պոժմաստեր» ՍՊԸ

Տնօրեն

ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ծառայության անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը | Ընդհանուր գումար | Ծառայությունների մատուցման ժամանակացույցն ըստ 2018թ. եռամսյակների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան նոյեմբերի 30 |
| 1 | **կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ** /Վերալիցքավորում և նորոգում ԿՓ-2 տեսակի կրակմարիչների/ | հատ | 578 | 1180 | 682 040 | 378 | 200 |
| 2 | **կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ** /Վերալիցքավորում և նորոգում ԿՓ-5 տեսակի կրակմարիչների/ | հատ | 300 | 3780 | 1 134 000 | 200 | 100 |
| 3 | **կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ** /Վերալիցքավորում և նորոգում ԿՓ-8 տեսակի կրակմարիչների/ | հատ | 26 | 5080 | 132 080 | 26 | 0 |
| 4 | **կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ** /Վերալիցքավորում և նորոգում ԱԿ-2 տեսակի կրակմարիչների/ | հատ | 200 | 1580 | 316 000 | 150 | 50 |

Ծանոթություն՝ 1.Կրակմարիչները լիցքավորման վայր և հակառակ ուղղությամբ տեղափոխումը կազմակերպվում և իրականացվում է զորամասի կողմից:

2. Հայտում նշված ծառայությունների համար անհրաժեշտ է հավաստագիր, որ վերալիցքավորված և նորոգված կրակմարիչները պիտանի են միանգամյա օգտագործման: Հավաստագիրը ներկայացնում է մատակարար ընկերությունը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պոժմաստեր» ՍՊԸ

Տնօրեն

ՄԱՆԳԱՍՅԱՆ

*Հավելված N 2*

*N ԲՄԾՁԲ-7/9-պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | CPV կոդ | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ. |
| 1 | կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ /Վերալիցքավորում և նորոգում ԿՓ-2 տեսակի կրակմարիչների/ | 50611200/1 | 446 040 | 446 040 | 446 040 | 682 040 | 682 040 | 682 040 |
| 2 | կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ /Վերալիցքավորում և նորոգում ԿՓ-5 տեսակի կրակմարիչների/ | | 756 000 | 756 000 | 756 000 | 1 134 000 | 1 134 000 | 1 134 000 |
| 3 | կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ /Վերալիցքավորում և նորոգում ԿՓ-8 տեսակի կրակմարիչների/ | | 132 080 | 132 080 | 132 080 | 132 080 | 132 080 | 132 080 |
| 4 | կրակմարիչների վերալիցքավորման ծառայություններ /Վերալիցքավորում և նորոգում ԱԿ-2 տեսակի կրակմարիչների/ | | 237 000 | 237 000 | 237 000 | 316 000 | 316 000 | 316 000 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պոժմաստեր» ՍՊԸ

Տնօրեն

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 3

N ԲՄԾՁԲ-7/9 պայմանագրի

Պայմանագրի կողմ

_______________________

_______________________

գտնվելու վայրը ___________

հհ ______________________

հվհհ ____________________

Պատվիրատու

_______________________

_______________________

գտնվելու վայրը ___________

հհ ______________________

հվհհ ____________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «            » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_______________» 20  թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      »      «                    » 20     թ. դուրս գրված N ___  հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալ մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_______________________

ստորագրություն

_______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունը ընդունեց

_______________________

ստորագրություն

_______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված N 3.1*

*N ԲՄԾՁԲ-7/9 պայմանագրի*

ԱԿՏ N _

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________________ -ի

Պատվիրատուի անվանումը                                                                 Կատարողի

վանումը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ. ______________________ -ին կնքված N ________________________

պայմանագրի կնքման ամսաթիվը                                        պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Ընդունեց**

**Հանձնեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________          ________________________

ազգանուն, անուն          ազգանուն, անուն

________________________          ________________________

Ստորագրություն          ստորագրություն